


1.2.5. Տրանսպորտ

Բեռնափոխադրումներ: 2004թ. հունվարին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2003թ. հունվարի նկատմամբ նվազել է 2.0%-ով:

Բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2004թ. հունվար	2004թ. հունվարը 2003թ. հունվարի նկատմամբ, %	2004թ. հունվարը 2003թ. դեկտեմբերի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա այլ բվում՝	389.0	98.0	59.2
երկաթուղային տրանսպորտով	146.8	117.3	78.3
<i>որից.</i>			
արտահանվել են բեռներ	23.4	162.5	94.0
ներկրվել են բեռներ	100.6	141.1	84.1
ներհանրապետական փոխադրումներ	22.8	57.9	53.1
ավտոտրանսպորտով	125.1	94.9	26.1
<i>որից.</i>			
արտահանվել են բեռներ	6.0	171.4	72.3
ներկրվել են բեռներ	27.2	155.4	60.4
ներհանրապետական փոխադրումներ	91.9	82.9	29.7
օդային տրանսպորտով¹	0.4	80.0	40.0
<i>որից.</i>			
արտահանվել են բեռներ	0.2	200.0	66.7
ներկրվել են բեռներ	0.2	50.0	28.6
խողովակաշարային տրանսպորտով	116.7	83.7	110.6

Բեռնափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների 2004թ. հունվարին, %



¹ Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխադրումները:

2003թ. հունվարին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտը կազմել է 31.5%, ավտոմոբիլայինը՝ 33.3%, օդայինը՝ 0.1%, խողովակաշարայինը՝ 35.1%:

Երկաթուղային տրանսպորտ: 2004թ. հունվարին ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2003թ. հունվարի նկատմամբ աճել է 17.3%-ով: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 68.5% (2003թ. հունվարի 57.0%-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 16.0% (2003թ. հունվարի 11.5%-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 15.5% (2003թ. հունվարի 31.5 %-ի դիմաց):

2004թ. հունվարին, ի տարբերություն 2003թ. հունվարի, հանրապետություն է ներկրվել բեռների հիմնական տեսակներից. սև մետաղներ՝ 0.2 հազ.տոննա և քիմիական ու հանքային պարարտանյութեր՝ 1.8 հազ.տոննա:

Ըստ բեռների հիմնական տեսակների 2004թ. հունվարին 2003թ. հունվարի նկատմամբ հացահատիկի և աղացվող մթերքի փոխադրման ծավալն ավելացել է 2.8 անգամ, անտառային բեռներինը (գերան, փայտանյութեր, ֆաներա և այլն)՝ 2.7անգամ, ցեմենտինը՝ 5.1 անգամ, հանքային շինարարական նյութերինը՝ 6.3%-ով: Քարածխի փոխադրման ծավալը նվազել է 66.7%-ով, սև մետաղների ջարդոնինը՝ 53.3%-ով, հանքաքար գունավոր մետաղներինը՝ 7.1%-ով, նավթ և նավթամթերքինը՝ 4.3%-ով:

Վազոնների միջին օրական բեռնաթափումը 2004թ. հունվարին կազմել է 83 վազոն և 2003թ. հունվարի նկատմամբ ավելացել 18 միավորով, իսկ բեռնումը կազմել է 25 վազոն և նվազել 6 միավորով: Նույն ժամանակաշրջանում վազոնապտույտը կազմել է 13.5 օր և 2003թ. հունվարի նկատմամբ արագացել է 1.5 օրով:

Ավտոմոբիլային տրանսպորտ: 2004թ. հունվարին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը 2003թ. հունվարի նկատմամբ նվազել է 2.0%-ով, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 21.7% (2003թ. հունվարի 13.3%-ի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 10.7% (2003թ. հունվարի 7.4%-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 4.8% (2003թ. հունվարի 2.7%-ի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 23.3% (2003թ. հունվարի 20.0%-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 73.5% (2003թ. հունվարի 84.0%-ի դիմաց):

Օդային տրանսպորտ: 2004թ. հունվարին օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը 2003թ. հունվարի ցուցանիշի նկատմամբ նվազել է 20.0%-ով, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 50.0% (2003թ. հունվարի 80.0%-ի դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 50.0% (2003թ. հունվարի 20.0%-ի դիմաց):

Խողովակաշարային տրանսպորտ: 2004թ. հունվարին խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն ներկրված բնական գազի բեռնափոխադրումների ծավալը 2003թ. հունվարի ցուցանիշի նկատմամբ նվազել է 16.3%-ով:

Բեռնաշրջանառություն: 2004թ. հունվարին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2003թ. հունվարի նկատմամբ նվազել է 4.7%-ով:

Բեռնաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների


	2004թ. հունվար	2004թ. հունվարը 2003թ. հունվարի նկատմամբ, %	2004թ. հունվարը 2003թ. դեկտեմբերի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը, մլն.տոննա-կմ այդ թվում՝	214.6	95.3	106.1
երկաթուղային տրանսպորտով	47.3	142.5	91.0
ավտոտրանսպորտով	4.7	120.1	61.0
օդային տրանսպորտով	0.5	125.0	83.3
խողովակաշարային տրանսպորտով	162.1	86.4	114.2

Ուղևորափոխադրումներ: 2004թ. հունվարին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2003թ. հունվարի ցուցանիշի նկատմամբ աճել է 7.0%-ով:

Ուղևորափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2004թ. հունվար	2004թ. հունվարը 2003թ. հունվարի նկատմամբ, %	2004թ. հունվարը 2003թ. դեկտեմբերի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ այդ թվում՝	13750.0	107.0	89.2
երկաթուղային տրանսպորտով	59.5	78.5	83.7
ավտոտրանսպորտով	12029.8	110.6	91.2
օդային տրանսպորտով ¹	61.1	111.7	65.8
էլեկտրատրանսպորտով	1599.6	86.8	77.2

Ուղևորափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների 2004թ. հունվարին, %



¹ Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված ուղևորափոխադրումները:

2003թ. հունվարին ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտինը կազմել է 0.6%, ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 84.6%, օդային տրանսպորտինը 0.4% և էլեկտրատրանսպորտինը՝ 14.4%:

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2004թ. հունվարին կազմել է 71.5%, իսկ տրոլեյբուսով՝ 18.5%, տրամվայով՝ 6.5% և ճոպանուղով՝ 3.5 %:

Ուղևորաշրջանառություն: 2004թ. հունվարին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը 2003թ. հունվարի նկատմամբ աճել է 0.6%-ով:

Ուղևորաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2004թ. հունվար	2004թ. հունվարը 2003թ. հունվարի նկատմամբ, %	2004թ. հունվարը 2003թ. դեկտեմբերի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորաշրջանառության ծավալը, մլն. ուղ-կմ այդ թվում՝	205.6	100.6	77.1
երկաթուղային տրանսպորտով	2.1	75.0	80.8
ավտոտրանսպորտով	151.5	102.2	86.2
յղային տրանսպորտով	45.8	99.8	57.3
էլեկտրատրանսպորտով	6.2	83.8	75.6

Տրանսպորտային պատահարներ: Հանրապետությունում 2004թ. հունվարին ճանապարհատրանսպորտային պատահարները 2003թ. հունվարի նկատմամբ աճել են 41.0%-ով:

Ճանապարհատրանսպորտային պատահարների ցուցանիշները

	2004թ. հունվար	2004թ. հունվարը 2003թ. հունվարի նկատմամբ, %	2004թ. հունվարը 2003թ. դեկտեմբերի նկատմամբ, %
Ճանապարհատրանսպորտային պատահարներ, ընդհամենը	86	141.0	111.7
Ձուկվել են, մարդ	20	3.3անգամ	71.4
Վիրավորվել են, մարդ	124	144.2	121.6